բովին սպիտակահեր ծերունի մ'է, որ շատ պատկառելի քալուածք մ'ունի...» (12)։

Կաթողիկոս օծուելէ ետք, հարկ էր ստանալ Շահին արտօնագիրը։ Ուստի Յակոբ Ջուղայեցի Իսպահան կ'երթայ Շահ Աբաս Բ.ի մօտ։ Նախ կը տեսնէ իշխանաց իշխանը, զոր Էհտիմալ–Դուլուաթ կը կոչեն, և անոր կը յայտնէ իր խորհուրդը։ Իշխանը կ'ըսէ. «Երբ քեզի իմացնեմ, կուգաս»։ Կաթողիկոսը կ'երթայ և կը պատրաստէ պատշաճ աղերսագիր մը և 300 ոսկիի նուէր մը, իր նախորդներուն սովորութեան համաձայն. կը գրէ նաև ուղերձ մը։ Զորեքշաբթի օր մը կը հրաւիրուի թագաւորին ունկնդրութեան, և անոր կը ներկայացնէ իր աղերսագիրը։ Ըստ վկայութեան Զաքարիա Սարկաւագին, հետեւեալ խօսակցութիւնը տեղի կ'ունենայ Շահին և Կաթողիկոսին միջև։

Արքան.— *Դուն տաճի՞կ ես՝ թէ կռապաշտ։*

Կաթողիկոսը.— *Աստուած մի՛ արասցէ. կռապաշտ չեմ. սակայն տաճիկ ալ չեմ։*

— *Ապա ի՞նչ ես։*

— *Քրիստոնեայ եմ։*

— *Դուք Քրիստոսի մասին ի՞նչ կ'ըսէք։*

— *Ինչ որ գրած են մարգարէները,*

---

(12) Chardin, Անդ, 274։